«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Անդրեասյան Արմինե

Մանկապարտեզ՝«Երևանի հ.20 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն –էջ 3-4

1.1 Խաղի տեսության մանկավարժական վերլուծություն (Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն »):
1.2 Խաղային գործունեության առանձնահատկությունները (Ս.Ա. Մարության,Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն »):
1.3 Խաղային գործունեության առանձնահատկությունները վաղ և նախադպրոցական տարիքում (Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն »):
1.4 Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում (Մ.Դ. Կովրիգինա«Մանկամսուրների և մսուր-մանկապարտեզների կրտսեր խմբերի քույր դաստիարակչուհի»):

Տեսական մաս – էջ 4-7

2.1 Դերային խաղերի ընդհանուր բնութագիրը և մանկավարժական արժեքը (Ս.Ա Մարության,Ա.Մ. Դալլաքյան « Նախադպրոցական մանկավարժություն »):էջ 230
2.2 Դերային խաղերի զարգացման առանձնահատկությունների կիրառումը իմ կատարած աշխատանքներում (Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան, «Նախադպրոցական մանկավարժություն » Վ.Ի. Յադեշկո, Ֆ.Ա. Սոխին «Дошкольная педагогика»,Լ.Սմբատյան,Լ. Սարգսյան, Լ. Վերդյան«Կերպարվեստի պարապմունքներ» ,Լ.Սարգսյան «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում» : https://www.youtube.com/watch?v=gqWAky_-X0I&t=1s

Եզրակացություն –էջ 8

Գրականության ցանկ -էջ 9

Ներածություն

Ինչպես գիտենք, մեծն Հ.Թումանյանը գտնում էր,որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է,նրա լրջությունը ,նրա էությունը»:Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը, Հ.Թումանյանը մշակում է երեխայի համար հայրենագիտական խաղեր և վերլուծում դրանց մանկավարժական արժեքը,երեխայի մտքերը ,բարոյականությունը զրգացնելու գործընթացում: Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝ Հ.Ա. Կոմենսկին,Ժ.Ժ. Ռուսոն,Ֆ.Ֆրյոբելը,Կ.Դ. ՈՒշինսկին,ինչպես նաև հայ խոշորագույն մանկավարժներ և գրողներ՝ Խ.Աբովյանը,Ղ.Աղայանը,Հ.Թումանյանը,Առ.Բահաթրյանը,Ս.Արղությանը,Ս.Բաբա-յանը և այլոք:Խ.Աբովյանը հորդորում էր մանկավարժներին «չզրկել երեխաներին անմեղ խաղերից»:Իր «Պարապ վախտի խաղալիք» աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկական խաղերի դերը:

Եթե « Այստեղ և անհապաղ» իքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրդապատճառն է,ապա դերային խաղի զարգացումն ու նրա առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում դրա վառ ապացույցը պետք է լինեն:

Վաղ տարիքում երեխայի խաղային գործունեության զարգացումը սերտ կապված է նրա ընդհանուր զարգացման հետ:Համաձայն Դ.Բ. Էլկոնինի խաղի տեսության,խաղը որպես բովանդակությամբ հասարակական գործունեություն ,կարող է ձևավորվել միայն որոշակի զգայա-շարժողական փորձի հիման վրա,որը փոխանցվում է մեծահասակների միջոցով:Վաղ տարիքում ձևավորվում են խաղային գործու-նեության խաղապայմանները,որոնք դրսևորվում են խաղի տարական ձևերով:
Վաղ տարիքի երեխաների խաղային գործունեությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.
- Խաղային գործունեությունը ծագում է առարկայական գործունեության հիման վրա և իրենից ներկայացնում է արտաքին աշխարհի դերային արտացոլում՝ձևավորված առարկայական գործողությունների միջոցով:
- Խաղային գործունեությունը արտացոլող բնույթի է ,խաղի միջոցով արտահայտվում են երեխայի հույզերն ու տպավորությունները,նրա ընդհանուր հուզական վերաբերմունքն արտաքին աշխարհին:
- Վաղ տարիքի երեխայի խաղի էությունը կարելի է բնութագրել որպես « դեր գործողության մեջ» բառակապակցությամբ,քանի որ խաղի պարզ սյուժեն կառուցվում է դերային գործողությունների շուրջ:

- Խաղի գործունեությունը ձևավորվում և զարգանում է մեծահասակների օգնությամբ և նրանց հետ համատեղ գործունեության շնորհիվ:

Երրորդ տարվա վերջում երևան են գալիս խաղեր,որոնցում երեխան ոչ միայն պատկերում է այս կամ այն գործողությունը,այլև դրա հետ միասին սկսում է ինքը հանդես գալ որևէ մեկի փոխարեն՝մայրիկի,բժշկի և այլն:Այն խաղերը,որոնցում երեխան իր վրա վերցնում է որոշակի դեր,կոչվում են դերային:Դերային խաղի հանդես գալը նոր աստիճան է երեխայի զարգացման մեջ:Դա ասում է,որ նրա մոտ արդեն առա են ՝ բավականաչափ փորձ,կողմնորոշում շրջապատում, ընդհանրացնելու ընդունակություն,առարկաների,սոցիալական միջավայրի երեվույթների առանձին,անջատ-անջատ հատկանիշների, առանձնահատկությունների միջև կապ սահմանելու կարողություն,այսինքն՝ դա ասում է պատկերացումների ու նախնական տարրական հասկացությունների երևան գալու մասին:
Սակայն դերային խաղը առայժմ չի դառնում խաղի հիմնական տեսակ,և հաճախ , դեռ խաղի ընթացքում երեխան մոռանում է իր վրա վերցրած դերը:Այս հասակում գերակշռում են պատկերավոր խաղերը,մնում են նաև առանց որոշակի սյուժետի խաղեր :Երեխաները գլորում են գնդակներ,դասավորում մանր առարկաներ,դրանք դնում տուփերի մեջ,ծալում ու դարսում լաթերը,բազմիցս անգամ իրար հետևից բանալիով լարում լարովի խաղալիքը և այլն:Սակայն այս խաղերում երեխաներին գրավում է ոչ միայն գործողությունների ընթացքը, այլև արդյունքը:Հաճախ երե - խաները ,գործելով առարկաներով ,կարծես թե « փորձառում » են,ուզում են իմանալ, ճշգրտել առարկաների այս կամ այն առանձնահատկությունը,կամ տիրապետել այս կամ այն գործողությանը .օրինակ՝ երեխան ձգտում է ,որ փոքր ֆիգուրաները չընկնեն, կանգնեն,հոլը երկար պտտվի,բոլոր խորանարդները տեղավորվեն արկղի մեջ, աշխատում է ջուրը փոքրիկ դույլի մեջ լցնել այնպես , որ չթափվի:

Տեսական մաս

I Գլուխ

Դերային խաղերը իրենց բնույթով ստեղծագործական են:Երեխան սյուժետադերային խաղերում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ,այլև տարբեր իրադրություններ ,անձնական փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ:
Վերջին տարիներին նույնիսկ ղեկավարման նոր մոտեցումների կիրառման պայմաններում ,արձանագրվում է սյուժետադերային խաղերի բավական ցածր մակարդակ և դրանց նկատմամբ երեխաների հետաքրքրության զգալի նվազում:

II Գլուխ

Դերային խաղի զարգացման առանձահատկություններն վաղ տարիքում առավել նկատելի դարձնելու և հետագա աշխատանքներում առավել արդյունավետ օգտագործելու համար ես այն թեմատիկ նախագծային ուսուցման շրջանակներում այս ուսումնական տարում պլանավորված հեքյաթի հետ ծանոթացման և ամփոփիչ պարապմունքների ցանկում փորձեցի տեղադրեմ և ստացա հետևյալ պատկերը. Կրտսեր II խումբ, 2022-2023 ուս. տարի, համակցված պարապմունք « Խոսքի զարգացում՝ նկարչության տարրերով»

Դաստիարակ՝ Ա.Անդրեասյան

Թեմա՝ «Պապն ու շաղգամը» (հեքիաթի բեմականացում)
Նպատակ՝ սովորեցնել երեխաներին հեքիաթի միջոցով գեղարվեստական ստեղծագործությունը լսելու,գնահատելու,հարցերին պատասխանելու կարողությունը,կապակցված խոսքը,հարստացնել բառապաշարը շաղգամ, համագործակցել բառերով, համագործակցության և փոխըմբռման միջոցով գործը ավարտին հասցնելուն և ապրումակցելուն, ինչպես նաև շարունակել սովորեցնել երեխաներին մաքուր և կոկիկ նկարելուն,զարգացնել երեխաների մեջ սեփական աշխատանքից հաճուք ստանալու կարողությունը:

Ընթացքը՝ երեխաները միաշարք կազմած մտնում են խմբասենյակ , նստում կիսաշրջան դասավորված աթոռակներին : Դաստիարակը հայտնում է ,որ այսօր միասին պետք է ճանապարհորդեն հեքիաթի կախարդական աշխարհ: Եվ որպեսզի նրանք հասնեն այնտեղ, պետք է միասին նստեն կախարդական գորգի վրա ,և դաստիարակը ներս է բերում գորգը:Բացում է այն և պարզվում է , որ գորգը մի քիչ պատառոտված է:Այդպես չի լինի ճանապարհորդել :Դրա համար պետք է սկզբում հասկանալ ով՞ է պատառոտել այն:

-Երեխանե՛ր, երբ դուք գուշակեք հանելուկը ,դուք կիմանաք ,թե որ կենդանին է փչացրել գորգը...

- Փոքրիկ է ու ճստճստան ,

Երկար պոչիկ ունի նա,

Մոխրագույն է գույնը նրա

Մենք ասում ենք ..... նրան: (մկնիկ)

Երեխաները պատասխանում են հանելուկին և հասկանում , որ գորգը փչացրել է մկնիկը: Դաստիարակը հայտնում է որ որպեսզի նորոգեն այն պետք է կարողանան

Իրենց ունեցած նախորոք կտրատված երկրաչափափական պատկերները ճիշտ անվանել և տեղադրել գորգի վրա կրծոտած տեղերով:Երեխաներից մի քանիսին նախապես բաժանվում է 6 երկրաչափական պատկեր՝ 2-ական մեծ և փոքր շրջան , քառակուսի,եռանկյուն:Երեխաները անվանում են պատկերի տեսքը,չափսը,գույնը և տեղադրում գորգի համապատասխան տեղերում:Երբ բոլոր 6 պատկերները տեղադրվում է գորգի վրա ,դաստիարակը հայտնում է ,որ այ հիմա բոլորս միասին, երբ արդեն գորգը պատրաստ է ,կարող ենք նստել նրա վրա և ճանապարհորդել այդ հրաշք աշխարհը:Երեխաները դաստիարակի հետ միասին կանգնում են գորգին ,հաշվում են մինչև 5-ը և հնչում է կախարդական երաժշտություն և երբ երեխաները փակ աչքերով պտտվում են,հայտնվում է մեծ շաղգամ:
-Երեխաներ մենք հայտնվեցինք մի հեքիաթում :Իսկ թե որ հեքիաթում ենք ,կիմանաք, երբ գուշակենք հանելուկը:

-Դեղին մկնիկը սպիտակ պոչիկով,

Նստել է բնում՝ կանաչ թփի տակ: (շաղգամ)

Երեխաների պատասխանից հետո դաստիարակը հայտնում է , որ այդ բանջարեղենի մասին կա մի հեքիաթ « Պապն ու շաղգամը»:Հեքիաթի հերոսների թվով գլխադիրներ են դրվում երեխաների գլուխների վրա:Նրանք, ովքեր հերոսներն են կանգնում են սենյակի մի անկյունում, իսկ մյուսները նորից նստում են կիսաշրջան և լսում հեքիաթը:

Դռան առաջ մի անգամ:
Պապը ցանեց մի շաղգամ:
Շաղգամն աճեց, մեծացավ
Պապը տեսավ, զարմացավ:
Պապը քաշեց, քաշքշեց,
Շաղգամն հողից չհանեց
Պապը կանչեց տատիկին:
Տատը՝ պապից, պապը՝ շաղգամից.
Հա՛ քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամը հողից չհանեցին:
Տատը կանչեց թոռնիկին,
Թոռը՝ տատից,
Տատը՝ պապից, պապը՝ շաղգամից
Հա՛ քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամը հողից չհանեցին:
Թոռը կանչեց շնիկին.
Շունը՝ թոռից, թոռը՝ տատից,
Տատը՝ պապից, պապը՝ շաղգամից

Հա՛ քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամը հողից չհանեցին։
Շունը կանչեց փիսոյին։
Փիսոն՝ շնից, շունը՝ թոռից,
Թոռը՝ տատից, տատը՝ պապից,
Պապը՝ շաղգամից,
Հա քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամը հողից չհանեցին։
Փիսոն կանչեց մկնիկին։
Մուկը՝ փիսոյից, փիսոն՝ շնից,
Շունը՝ թոռից, թոռը՝ տատից,
Տատը՝ պապից, պապը՝ շաղգամից,
Որ քաշեցին, քաշքշեցին,
Շաղգամը հողից հանեցին։

Երեխաները տեքստին համապատասխան ցույց են տալիս բեմականացված հեքիաթը։ Հեքիաթի ավարտին երեխաները տեղեկանում են,որ հիմա նրանք պետք է խաղ խաղան,ըստ որի,իրենք մկնիկի հրաշագործ օգնականներն են։Նրանք պետք է հեքիաթի մկնիկին շատ ընկերներ և օգնականներ նկարեն , որպեսզի նրանք մյուս շաղգամներն էլ օգնեն հանեն այլ հեքիաթների բանջարանոցներում։Նա հայտնում է ,որ սեղաններին դրված են թղթեր ,որոնց վրա նկարված են մկնիկներ,բայց նրանք չունեն պոչիկներ և բեղիկներ։Եվ որ հիմա նրանք պետք է նստեն սեղանների շուրջ որպեսզի նկարեն մկնիկների համար կարճ գծիկներ՝ բեղիկներ, երկար գծիկներ՝պոչիկներ։
Երեխաները մոտենում են սեղաններին ,վերցնում են մատիտներ և սկսում նկարել։Դաստիարակը մոտենում է սեղաններին, օգնում դժվարացողներին։ Պարապմունքի վերջում դաստիարակը հայտնում է ,որ համագործակցության և ընկերասիրության շնորհիվ կարելի է շատ գործեր անել։

Համակցված պ-ի ընթացքին հետևել են տնօրենը,երաժշտության դաստիարակը և այլ դաստիարակներ։Ըստ տնօրենի կարծիքի երեխաները իրենց զգում էին ազատ,անկաշկանդ,դաստիարակը հասա իր նպատակին ։Դերային խաղը հիմք ընդունելով ՝կարողացան յուրաքանչյուրը կատարել իրեն հանձնարարված առաջադրանքները։

Այսպիսով, ելնելով վերը նշվածներից,կարելի է գալ հեզրահանգումների ըստ որոնց.

. Խաղերը մեծ նշանակություն ունեն երեխայի բնավորության դաստիարակման գործում:Եվ անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է դերային խաղը:Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընհանուր խաղերում:

. Երեխան իր կյանքի ոչ մի փուլում չի սովորի անքան շատ,ինչքան խաղային գործունեության ընթացքում:

.Դերախաղի օգնությամբ երեխան ձեռք է բերում նոր որակներ , ինչպիսիք են շփվելու, իր գործողությունները հասակակիցների հետ կոորդինացնելու ունակությունը , զգացմունքների արտահայտությունը:Լուծվում են մի շարք խնդիրներ՝ բացահայտել իրենց ներքին աշխարհը, լուծել ներքին կոնֆլիկտեր,բարձրացնել ինքնագնահատականը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 212-248

2. Մ.Դ. Կովրիգինա«Մանկամսուրների և մսուր-մանկապարտեզների կրտսեր խմբերի քույր դաստիարակչուհի» էջ 375-376

3. Լ.Սմբատյան,Լ. Սարգսյան, Լ. Վերդյան«Կերպարվեստի պարապմունքներ» էջ 171

4. Լ.Սարգսյան «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում» : էջ 30-31

5. «Մանկապարտեզ կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների)կրթական համալիր ծրագիր: էջ 140